# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՄԿԾ) ՄԱՍՆԱԳԻՐԸ

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը և մասնագիտության դասիչը | 023102.00.7 Օտար լեզու և գրականություն՝ 023102.02.7 «Անգլերեն լեզու և գրականություն» |
| Որակավորման աստիճան | Մանկավարժության մագիստրոս |
| Ուսուցման լեզու | Հայերեն, անգլերեն |
| Ուսուցման ձևը | Առկա |
| Ուսուցման տևողությունը | Մանկավարժության մագիստրոս, մագիստրատուրայի <<Անգլերեն լեզու և գրականություն>> մասնագիտության կրթական ծրագրի (այսուհետ՝ ԿԾ) նորմատիվային ժամկետը երկու տարի է: |
| Արտոնագրում | Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա Ա № 0017, 294-Ա/2 05.04.2018թ. |
| ՄԿԾ-ի մուտքի պայմաններ | Մանկավորժության մագիստրոս, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի աստիճան և հաջողությամբ հանձնած լինի ընդունելության քննություն կամ հարցազրույց: |
| Ծրագրի նպատակը | Ծրագիրը նպատակաուղղված է անգլերեն լեզվի և գրականության բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, մանկավարժության, գիտության, ինչպես նաև այլ բնագավառներում աշխատանքային գործունեության համար:<br>Ծրագրի նպատակներն են՝<br>• Նպաստել մասնագիտական մակարդակով անգլերեն լեզվին և անգլիալեզու գրականությանը տիրապետելուն,<br>• Ձևավորել մագիստրատուրայի շրջանավարտի մոտ բանասիրական ցանկացած տեքստերի (գրավոր, բանավոր, և վիրտուալ) հետ աշխատելու կարողություն,<br>• Ձևավորել ձեռքբերած բանասիրական գիտելիքները մանկավարժական, գիտահետազոտական և այլ բնագավառներում կիրառելու կարողություն և հմտություն,<br>• Ձևավորել ուսանողների մոտ ինքնաքննադատության, ինքնակրթության, ինքնազարգացման անհրաժեշտություն,<br>• Ձևավորել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ՝ պլանավորելու և կատարելու ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ: |
| Ծրագրի վերջնարդյունքները | «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.<br>*ա) Ընդհանրական կոմպետենցիաներ*<br>բ) Գործիքային կոմպետենցիաներ |

| | |
|---|---|
| | դ) Համակարգային կոմպետենցիաներ<br>ե) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ<br><br>*Մասնագիտական – գործնական*<br>*Մեթոդական գործունեության ոլորտում*<br>*զ) Ուսուցչական կոմպետենցիաներ*<br>*է)* Սոցիալ-անձնային և համամշակութային կոմպետենցիաներ |
| **Մասնագիտական գործունեության ոլորտները.** | Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ մագիստրատուրայի շրջանավարտը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝<br>1. Հանրակրթական դպրոցներում՝ որպես անգլերեն լեզվի և գրականության ուսուցիչ<br>2. Մեթոդիստ<br>3. Լրագրող, սրբագրիչ<br>4. Անգլերեն լեզվի ուսուցման դասընթացներում՝ որպես մասնագետ,<br>5. Գիտահետազոտական հիմնարկություններում՝ որպես գիտաշխատող,<br>6. Բուհերում՝ որպես օտար լեզուների և գրականության ամբիոնի աշխատակից: |
| ***Հետագա ուսման հնարավորութ-յունները*** | «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ է կրթությունը շարունակելու ասպիրանտուրայում: |